



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3  
Էլ.փոստ /E-mail/ эл.почта: [e.pirumyan@mnp.am](mailto:e.pirumyan@mnp.am)  
Web page: [www.mnp.am](http://www.mnp.am)  
☎ (374 10) 58 54 19  
☎ (374 10) 54 08 57

№ \_\_\_\_\_

<< >> \_\_\_\_\_ 2014 թ.

Արարատի բնապահպանական տեղեկատվական  
հասարակական <<Օրիուս>> կենտրոնի  
համակարգող պարոն Վ. Զիլինգարյանին

Հարգելի պարոն Զիլինգարյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի մայիսի 19-ի թիվ AA-001 գրության, հայտնում եմ, որ համաձայն Արարատի մարզի քննչական բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Գ. Ստեփանյանի 05.05.2014թ. №7/33-1140 գրության թիվ 2720013 քրեական գործով վարույթը կարճվել է և << քր. օրենսգրքի 287 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդում չի իրականացվելու՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման մեջ նշված է, որ ըստ փորձաքննական եզրակացության՝ ձկների անկման պատճառը ջրում թթվածնի խիստ պակասն է: Այն պայմանավորված էր ցամաքուրդում առկա մեծ քանակությամբ ջրիմուռներով, որոնք գիշերային ժամերին ջրից վերցրել էին լուծված թթվածինը, դառնալով ձկների մասսայական անկման պատճառ:

Հարգանքով՝

Է. Փիրումյան

Ա. Վարդանյան  
523835

